

**ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ԶԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ**

ք. Երևան

29 հունվարի 2024թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա), ի դեմս նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանի, որը գործում է Ակադեմիայի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ» ՊՈԱԿը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Նաիրա Մարտինի Այվազյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ Որոշում), «Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ հետևյալի մասին.

### 1. Պայմանագրի առարկան

1.1 Պայմանագրով Ակադեմիան պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով նախատեսված 276 941 784 ՀՀ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է Ծրագիրն իրականացնել Որոշմամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

1.2 Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը, ակնկալվող գիտական արդյունքները՝ դրանց որակական և քանակական ցուցանիշները, նախահաշիվը, կատարողների մասին տեղեկությունները, Ծրագրի առաջադրանքը և օրացուցային պլանը ներկայացված են Պայմանագրի հավելվածներում:

### 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1 Ակադեմիան իրավունք ունի՝

2.1.1 Կազմակերպությունից պահանջելու կատարել Պայմանագրի 2.4 կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2 ցանկացած ժամանակ ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3 չընդունելու իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ,

2.1.4 առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

2.1.4.1 Կազմակերպությունը ժամանակին չի սկսում Ծրագրի իրականացումը, կամ Ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

2.1.4.2 Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է Ծրագրով նախատեսված Միջոցառումների իրականացման ժամկետները (նախատեսված լինելու դեպքում),

2.1.4.3 իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում Ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5 Պայմանագիրն օրենքով կամ Պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2 Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1 Ակադեմիայի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու Պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.2 Ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավելու երրորդ անձանց,

2.2.3 Ակադեմիայի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3 Ակադեմիան պարտավոր է՝

2.3.1 Ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2 ընդունել համապատասխան որոշում՝ իրականացված Միջոցառումների մասին ներկայացված տարեկան հաշվետվության վերաբերյալ,

2.4 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1 Ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2 Ծրագիրը կատարել առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը Ակադեմիա հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3 Պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել Ծրագրով և Պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4 կատարել Ակադեմիայի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5 աշխատանքի ակնկալվող արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին եռօրյա ժամկետում տեղեկացնել Ակադեմիա,

2.4.6 Ակադեմիա ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում Պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ Հայտ)՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է Պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7 Պայմանագրի նախահաշվում ֆինանսական ցուցանիշներից շեղումների դեպքում Ակադեմիա ներկայացնել հիմնավորում,

2.4.8 իրականացնել Ծրագրի շրջանակներում Ակադեմիայի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հաշվապահական հաշվառում,

2.4.9 Ծրագրի ավարտից հետո Ակադեմիա ներկայացնել միջոցառումների իրականացման մասին տարեկան հաշվետվություն՝ դրան կցելով գիտական ծրագրի հաշվետվության հանձնման-ընդունման արձանագրություն,

2.4.10 Պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու Ակադեմիայի հնարավորությունը,

2.4.11 Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան,

2.4.12 Պայմանագրով նախատեսված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումները/խնայողությունները վերադարձնել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

### 3. Ծրագրի ֆինանսավորման չափը

Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է 276 941 784 ՀՀ դրամ:

### 4. Մշտադիտարկում

4.1 Ակադեմիան ցանկացած ժամանակ կարող է իրականացնել մշտադիտարկում՝ ուսումնասիրելով Ծրագրին առնչվող փաստաթղթեր և նյութեր:

4.2 Մշտադիտարկումն իրականացվում է համաձայն Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 20.05.2020 թվականի N 638-Ա/2 հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ֆինանսավորմամբ իրականացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության ծրագրերի և թեմաների մշտադիտարկման կարգի»:

## 5. Վճարման կարգը և ժամկետները

5.1 Ակադեմիան Կազմակերպությանը վճարումները կատարում է Հայտն ընդունելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2 Ակադեմիան Պայմանագրի գինը վճարում է Պայմանագրում նշված Կազմակերպության հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. բյուջետային տարվա 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

## 6. Կողմերի պատասխանատվությունը

Կողմերը Պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար կրում են պատասխանատվություն՝ ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան:

## 7. Պայմանագրի գործողության ժամկետը

Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Եզրափակիչ դրույթներ

9.1 Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն է Կազմակերպության կողմից Ակադեմիա ներկայացված Ծրագրի հայտը:

9.3 Պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

## 10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Ակադեմիա

Կազմակերպություն

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ «Լ.Օրբելու անվ. ֆիզիոլոգիայի ինստիտուտ»

ՊՈԱԿ

ք. Երևան, Մ. Բաղրամյան 24  
Հ/հ՝ 900011024115  
ՀՎՀՀ՝ 00005673  
ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարան

Հայաստան, ք.Երևան, Օրբելի Եղբ. 22,  
Հ/հ՝ 900018005620  
ՀՎՀՀ՝ 00008543  
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն

Նախագահ՝

  
(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ

Կ. Տ.



Ծրագրի գիտական ղեկավար

  
(ստորագրություն)

Կազմակերպության տնօրեն՝



Նաիրա Մարտինի Այվազյան

Այվազյան Նաիրա Մարտինի

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՆԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ**

Մենք՝ ներքոստորագրյալներս, Ակադեմիայի նախագահ Աշոտ Սերոբի Սաղյանը և Կազմակերպության տնօրեն Նաիրա Մարտինի Ավագյանը, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել 29 հունվարի 2024թ. N 1-17/24-I/INSTPHYSIOL պայմանագրով աշխատանքի գնի վերաբերյալ՝ 276 941 784 ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

**Ակադեմիա**

Նախագահ՝



(ստորագրություն)

ԱՇՈՏ ՍԵՐՈԲԻ ՍԱՂՅԱՆ



**Կազմակերպություն**

տնօրեն՝



(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Ավագյան



**ԱԿՆԿԱԼՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի


Ակնկալվող արդյունք	Քանակ
ԱԳ (ազդեցության գործակից) ունեցող պարբերականներում հոդվածներ՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների՝	25
ԱԳ չունեցող, բայց Scopus գիտատեղեկատվական շտեմարանում ներառված պարբերականներում հոդվածներ՝	23
ՀՀ ԲՈԿ ցանկում ներառված պարբերականներում հոդվածներ՝	25
Այլ պարբերականներում հոդվածներ/հոդված ժողովածուի մեջ՝	5
Book Citation Index հրատարակիչների ցանկում ներառված հրատարակչություններում հրատարակված մենագրություններ, գրքեր, հոդվածներ՝	1
Գրքեր, մենագրություններ՝	2
Գիտաժողովի նյութեր՝	40
Արտոնագրեր՝	1

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Ավագյան

Կազմակերպության գիտքարտուղար՝

  
(ստորագրություն)

Նորգոլա Քոհարյան  
Ալեքսանյան



**ՆԱԽԱՀԱՇԻՎ**

«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

«Ձ դրամ

Հ/հ	Հոդվածի անվանումը	Ֆինանսավորման չափը	այդ թվում՝			
			1-ին եռամսյակ (20%)	2-րդ եռամսյակ (25%)	3-րդ եռամսյակ (25%)	4-րդ եռամսյակ (30%)
1.	աշխատավարձ՝ ներառյալ եկամտային հարկը	261 457 908	52 291 581	65 364 477	65 364 477	78 437 373
2.	տնտեսական ծախսեր՝	8 983 876	1 796 775	2 245 969	2 245 969	2 695 163
3.	այլ ծախսեր՝	6 500 000	1 300 000	1 625 000	1 625 000	1 950 000
Ընդամենը՝		276 941 784	55 388 356	69 235 446	69 235 446	83 082 536

Կազմակերպության տնօրեն՝

  
 (ստորագրություն)

Նաիրա Մարտինի Ավագյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
 (ստորագրություն)

Արսեն Առաքելյանի  
 Հովհաննիսյան



ՆԱԽԱՀԱՇՎԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

« դրամ

Հ/հ	Ծախսերի անվանումը	Ֆինանսավորման ծավալը
	<b>Կոմունալ ծառայություններ, այդ թվում՝</b>	<b>8 983 876</b>
1.	էլեկտրաէներգիայի ծառայություն	4 700 000
2.	գազի ծառայություն	3 900 000
3.	ջրամատակարարման ծառայություն	383 876
4.	կապի ծառայություն	0
5.	աղբահանություն	0
	<b>Այլ ծախսեր, այդ թվում՝</b>	<b>6 500 000</b>
1.	Պահնորդական ծառայություն	6 500 000

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Այվազյան

Կազմակերպության գլխավոր հաշվապահ՝

  
(ստորագրություն)

Արսեն Մարտինի  
Հովհաննիսյան





**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
«Ենթակառուցվածքի պահպանում ու զարգացում» ծրագրի

A - ամսական աշխատավարձ (ներառյալ հարկերը և այլ պարտադիր վճարները)      D - աշխատաժամանակի շաբաթական տևողություն (ժամ)  
B - ամիսների քանակ      E - գումարային  
C - աշխատաժամանակի ուժեղացում

«Որամ»

ազգանուն անուն հայրանուն	պաշտոն	A	B	C	D	E
<b>Վարչասպասարկող անձնակազմ</b>						
Ալվազյան Նաիրա Մարտինի	Տնօրեն	400 000	12	հիմնական	40	4 800 000
Մաղաթյան Հովհաննես Արսենի	Փոխտնօրեն	198 000	12	հիմնական	40	2 376 000
Ներզոզվա Քրիստինա Ալեքսանդրի	Գիտ. քարտուղար	125 000	12	հիմնական	20	1 500 000
Հովհաննիսյան Աշխեն Մնացականի	Գլխավոր հաշվապահ	345 000	12	հիմնական	40	4 140 000
Հակոբյան Կարինե Գեղամի	Հաշվապահ	150 000	12	համատեղություն	20	1 800 000
Կարապետյան Ռուզաննա Արմենակի	Կադրերի ավագ տեսուչ	322 601	12	հիմնական	40	3 871 212
Պետրոսյան Էդգար Վալերիի	Վերելակավար	52 561	12	համատեղություն	20	630 732
Կիրակոսյան Վարազդատ Արևշատի	Պարեն	200 000	12	հիմնական	40	2 400 000
Կարապետյան Լիանա Էդուարդի	Քարտուղար	200 000	12	հիմնական	40	2 400 000
Նաջարյան Արմեն Սերյոժայի	Վարորդ	291 711	12	հիմնական	40	3 500 532
Օհանյան Սուրեն Սերգեյի	Բանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Պետրոսյան Կարեն Սասունի	Բանվոր	105 121	12	հիմնական	40	1 261 452
Կարեն Կարենի Պանչոկյան	Բանվոր	93 600	12	հիմնական	30	1 123 200
Հարությունյան Արման Մնացականի	Բանվոր	150 000	12	հիմնական	40	1 800 000
Իոնանովա Դոնարա Ալեքսեյի	Հավաքարար	96 591	12	հիմնական	40	1 159 092
Սագրանդյան Լարիսա Ալյոշայի	Հավաքարար	96 591	12	հիմնական	40	1 159 092
Ասլանյան Աշոտ Վարդգեսի	Սերվետարիումի վարիչ	194 000	12	համատեղություն	20	2 328 000
Հայրապետյան Անուշ Զանիբեկի	Կենդանանոցի աշխատող	100 000	12	հիմնական	40	1 200 000
Գասպարյան Մնացական Գասպարի	Կենդանանոցի խնամող	100 000	12	հիմնական	40	1 200 000
<b>Գիտական անձնակազմ</b>						
<b>Լաբորատորիա Կենտրոնական նյարդային համակարգի ֆիզիոլոգիա</b>						
Մանվելյան Լևոն Ռաֆայելի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Թերզյան Դիանա Օնիկի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Օհանյան Լիա Ռազմիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Գրիգորյան Մարիամ Լևոնի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մաղաթյան Հովհաննես Արսենի	Ավագ ճարտարագետ	78 046	12	ներքին համատեղություն	20	936 552

Մեղավորյան Ռուբեն Էդուարդի	Ավագ ճարտարագետ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Խոյեցյան Նելլի Սոսի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
<b>Լաբորատորիա Իմունոլոգիայի և հյուսվածքային ճարտարագիտություն</b>						
Կարաբեկյան Զարուհի Իվանի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Գրիգորյան Վահան Սուրենի	Կրտսեր գիտաշխատող	89 951	12	հիմնական	20	1 079 412
Սևոյան Գոհարիկ Պետրոսի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Գասպարյան Սեդա Սամվելի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Պոլիանչիկ Դանիիլ Եվգենիի	Կրտսեր գիտաշխատող	89 951	12	հիմնական	20	1 079 412
Կալինովսկայա Օլգա Վլադիմիրի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մահսա Քամալի Նասեր	Կրտսեր գիտաշխատող	89 951	12	հիմնական	20	1 079 412
<b>Լաբորատորիա Հարթ մկանների ֆիզիոլոգիա</b>						
Ղազարյան Քնարիկ Վահանի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Հունանյան Նաիրա Գևորգի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Չիբուխյան Ռոզա Գարուշի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Փիլիպոսյան Տաթևիկ Արտավազի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Տրոֆիմովա Յուլիյա Եվգենիի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մկրտչյան Արուսյակ Վաչիկի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Մկրտչյան Հերմինե Խաչիկի	Ավագ լաբորանտ	78 046	12	հիմնական	20	936 552
<b>Լաբորատորիա Թունաբանական հետազոտություն</b>						
Այվազյան Նաիրա Մարտինի	Ղեկավար	224 876	12	ներքին համատեղություն	20	2 698 512
Կիրակոսյան Գայանե Ռաֆայելի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Զաքարյան Նաիրա Արմենի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Ֆեդոտով Սերգեյ Ալեքսանդրովիչ	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Պետրոսյան Մարիամ Սամվելի	Ավագ գիտաշխատող	75 069	12	համատեղություն	10	900 828
Ղուլիկյան Լուսինե Ալմիրի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Թադևոսյան Հասմիկ Հենրիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Քիչմիրյան Արսեն Վլադիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ղուկասյան Գևորգ Վահանի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մաթևոսյան Լուսինե Աշոտի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Օվանոցյան Աննա Հովհաննեսի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Բասեղյան Արամ Գալուստի	Ավագ ճարտարագետ	156 091	12	հիմնական	40	1 873 092
<b>Լաբորատորիա Զգայաշարժ ինտեգրացիա</b>						
Սարգսյան Վաղինակ Հայկազի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Համբարձումյան Լիլիա Էդիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Դարբինյան Լիլիթ Վահանի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016

Մանուկյան Լարիսա Փայլակի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ինջեյան Ազնիվ Հակոբի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Սարգսյան Նաիրա Վաղինակ	Ավագ լաբորանտ	117 068	12	հիմնական	30	1 404 816
<b>Լաբորատորիա Հիստոքիմիայի և մորֆոլոգիայի</b>						
Դանիելյան Մարգարիտ Հարությունի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Նազարյան Օֆիկ Համբարձումի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Կարապետյան Քրիստինե Վանիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Խաչատրյան Վահագն Պերճի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Մկրտչյան Անուշ Արշակի	Ավագ լաբորանտ	78 046	12	համատեղություն	20	936 552
Ազիզյան Նարինե Համլետի	Ավագ լաբորանտ	78 046	12	հիմնական	20	936 552
Անտոնյան Իննա Վալերիի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
<b>Լաբորատորիա Մարդու հոգեֆիզիոլոգիա</b>						
Խաչունց Ալեքսանդր Սերգեյի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Թադևոսյան Նարինե Էդուարդի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Գալստյան Հասմիկ Գրիգորիի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Թումանյան Անուշ Արզանի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սարգսյան Արմեն Ռոբերտի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սահակյան Արտյոմ Ալբիկ	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սարգսյան Արմինե Վարդգեսի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Վահրադյան Լիլիթ Վաչագանի	Լաբորանտ	59 857	12	հիմնական	20	718 284
<b>Լաբորատորիա Ինտեգրատիվ կենսաբանություն</b>						
Սարգսյան Ռաֆիկ Շավարշի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Քարամյան Գագիկ Գուրգենի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Սիմոնյան Լուիզա Գագիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Սարգսյան Վահրամ Ռաֆայելի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մանուկյան Արմեն Միսակի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Կոստանյան Հասմիկ Լավրենտիի	Կրտսեր գիտաշխատող	44 975	12	համատեղություն	10	539 700
Միսակյան Լևոն Հրաչի	Ավագ ճարտարագետ	39 023	12	հիմնական	10	468 276
<b>Լաբորատորիա Նյարդաներգատչական փոխհարաբերություններ</b>						
Չավուչյան-Պապյան Վերգինե Անդրանիկի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Սիմոնյան Կարեն Վազգենի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Ավետիսյան Լիլիթ Գագիկի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Իսոյան Արմինե Սամվելի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Ավետիսյան Ռիմա Ավետիսի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
<b>Լաբորատորիա</b>						

ԿՆՀ ֆունկցիաների փոխհատուցման ֆիզիոլոգիա						
Սարգսյան Զոն Սարգսի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Ավետիսյան Զուբեդյա Ալեքսանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Պողոսյան Միխայիլ Վալլերիի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Ստեփանյան Հարություն Յուրիի	Գիտաշխատող	115 084	12	հիմնական	20	1 381 008
Հարությունյան Տիգրան Կարենի	Կրտսեր գիտաշխատող	89 951	12	հիմնական	20	1 079 412
Ցականյան Կարեն Վասիլի	Ավագ ճարտարագետ	156 091	12	հիմնական	40	1 873 092
Ավետիսյան Աստղիկ Վարուժանի	Ավագ լաբորանտ	156 091	12	հիմնական	40	1 873 092
<b>Կենտրոն Հեռավար ուսուցման կենտրոն</b>						
Ավետիսյան Էլմիրա Ալեքսանդրի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Պետրոսյան Անահիտ Աղվանի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Կարապետյան Անահիտ Գևորգի	Ավագ գիտաշխատող	150 138	12	հիմնական	20	1 801 656
Ներզոզվա Քրիստինա Ալեքսանդրի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Պողոսյան Ռուդոլֆ Անդրեյի	Գիտաշխատող	230 168	12	հիմնական	40	2 762 016
Մելտոնյան Աշոտ Վարազդատի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Պետրոսյան Սոսե Սամվելի	Լաբորանտ	119 714	12	հիմնական	40	1 436 568
<b>Լաբորատորիա Ֆիզիոլոգիապես ակտիվ նյութերի զտման, սերտիֆիկացման եւ ստանդարտիզացման լաբորատորիա</b>						
Ոսկանյան Արմեն Վաղինակի	Ղեկավար	449 752	12	հիմնական	40	5 397 024
Դարբինյան Աննա Աշոտի	Ավագ գիտաշխատող	300 276	12	հիմնական	40	3 603 312
Մողղովյան Արմենուհի Վաչագանի	Գիտաշխատող	115 084	12	համատեղություն	20	1 381 008
Պարսեղյան Լիլյա Մուշեղի	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
Բաբաջանյան Միլենա Աշոտի	Կրտսեր գիտաշխատող	179 901	0	հիմնական	40	0
Պողոսյան Սոնա Սամվել	Կրտսեր գիտաշխատող	179 901	12	հիմնական	40	2 158 812
<b>Լաբորատորիա Գերազանցության տարածաշրջանային կենտրոն</b>						
Սարվազյան Նարինե Արմենի	Գլխավոր գիտաշխատող	125 005	12	հիմնական	10	1 500 060
<b>Լաբորատորիա Կենսաֆիզիկական հետազոտություններ</b>						
Պետրոսյան Ռաֆայել Պետրեոսի	Ղեկավար	112 438	12	համատեղություն	10	1 349 256
Աշխատավարձային ֆոնդի մնացորդ՝						0
Ընդհանուր գումար՝						261 457 908

Կազմակերպության տնօրեն՝

  
(ստորագրություն)

Նաիրա Մարտինի Այվազյան

Կազմակերպության անձնակազմի կառավարման  
ստորաբաժանման ղեկավար



  
(ստորագրություն)

Ռուսլաննա Չերժենկի Գարապեղյան  
(ԱԱՀ)

**ԱՌԱՋԱԴՐԱԼՔ**

**«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի**

1. Աշխատանքի կատարման հիմքը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջե:

2. Աշխատանքի նպատակը: Կիրառելով ժամանակակից էլեկտրոֆիզիոլոգիական, հյուսվածքաբանական, կենսաֆիզիոլոգիական, ինչպես նաև՝ կենսապատկերավորման գանազան մեթոդներ, ուսումնասիրել նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկ, շարժողական ու վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման խորքային մեխանիզմները:

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները:

ՀՀ ԳԱԱ ակադ. Լ. Ա. Օրբելու անվ. Ֆիզիոլոգիայի ինստիտուտի գիտական հետազոտությունները նվիրված են կենտրոնական, վեգետատիվ և ծայրամասային նյարդային համակարգերի գործունեության հիմքում ընկած ֆիզիոլոգիական մեխանիզմների բացահայտման ու համապատասխան բնագավառներում ներդրման հարցերին: Ինստիտուտը՝ հանդիսանալով ֆիզիոլոգիական հետազոտությունների կորոշինացնող կենտրոն ՀՀ գիտակրթական համայնքում, պարտավորվում է նշված ուղղությամբ իրականացնել հետանկարային ու ցպահանջ հետազոտություններ: Ինստիտուտի խմբերի ուսումնասիրությունները մեծամասամբ լիովին վերածածկում են նյարդաֆիզիոլոգիայի հիմնական ուղղությունները, ներգրավելով նաև ժամանակակից մոլեկուլային կենսաբանական և մանրադիտման մեթոդական մոտեցումները՝ էլեկտրոֆիզիոլոգիա, նյարդադեգեներատիվ և քաղցկեղային պաթոլոգիաների կենդանական մոդելներ, արհեստական թաղանթների ձևավորում, լուսային, ֆազ-կոնտրաստ, ֆլուորեսցենտային, էլեկտրոնային, ատոմային-ուժային և կոնֆոկալ մանրադիտում, հյուսվածքների աճեցում բջջային կուլտուրաների միջոցով, ինչպես նաև հիպերսպեկտրալ և տրանսմիսիոն էլեկտրոնային կենսապատկերավորման մեթոդներով:

4. Աշխատանքի բովանդակությունը:

2023թ. հիմնադրված երկու նոր լաբորատորիաները զբաղվելու են երկարաժամկետ մոլեկուլային հիշողության մեխանիզմների ուսումնասիրությամբ, ինչպես նաև բնության մեջ առավել կարևոր կենսական գործառույթներ իրականացնող սպիտակուցների հետազոտությամբ՝ միաժամանակ մոլեկուլների ուժային սպեկտրոսկոպիայի և հաշվողական մեթոդների կիրառմամբ (դեկավար՝ կ.գ.թ. Ռ. Պետրոսյան), և նոր սպեկտրային պատկերավորման գործիքների մշակմամբ՝ տարբեր կլինիկական համապատասխան թիրախների և պաթոլոգիական

պայմանների պատկերավորման և քանակականացման համար (դեկավար՝ կ.գ.թ. Ն.Ա.Սարվազյան):

2024թ. նախատեսվում է մշակել շարժողական ակտիվության վրա անդաստակային համակարգի դերի ուսումնասիրման մեթոդ: Ինչպես հայտնի է, անդաստակա-ողնուղեղային տրակտը հանդիսանում է օրգանիզմի շարժումների կարգավորման հիմնական համակարգերից մեկը: Միաժամանակ շարունակվելու են շարժողական ակտիվության վրա ցանցա-ողնուղեղային նեյրոնների դերի ուսումնասիրման փորձերը: Գրականության մեջ այդպիսի հետազոտությունները բացակայում են: Հետազոտությունները կատարվում են գորտի պերֆորացվող ուղեղի վրա, նեյրոնների ակտիվության ներբջջային արտաձման մեթոդով: Ստացված արդյունքները կարևոր նշանակություն ունեն էվոլյուցիոն զարգացման տեսանկյունից:

Նախատեսվում է սերտորեն զբաղվել Ինստիտուտում մշակված օձի կծածի դեմ հակաթույնի առևտրայնացման հարցերով, ինչպես նաև հետազոտել հեմոռագիայի առաջացման յուրահատկությունները և նախադրյալները, և դրանց հնարավոր չեզոքացումը նոր թերապևտիկ մոտեցումների միջոցով:

2024թ. առնետների փորձարարական մոդելների վրա կշարունակվեն նյարդա դեգեներատիվ (ՆԴ) հիվանդությանների [Պարկինսոնի (ՊԶ) և վեստիբուլային վնասվածքի (ՄԼ-միակողմանի լաբիրինթեքթոմիա)] զարգացման մեխանիզմների բացահայտման արդիական խնդիրներն ու նրանց գործառույթների վերականգնման ընթացքը տարբեր էկզո- և էնդոգեն ծագման կենսամոդուլյատորների միջոցով: Հետազոտության նպատակն է ընդլայնել խանգարված գործառույթների նյարդապաշտպանիչ և վերականգնողական մեխանիզմների բարելավման և բուժման մասին գիտելիքները: Նախատեսվում է ուսումնասիրել հիպոկամպուսի և Դեյտերսի վեստիբուլային կորիզի նեյրոնների նեյրոնային մեխանիզմները նշված նյարդադեգեներատիվ հիվանդությունների դեպքում: Նրանք կարող են նաև օգտակար լինել բժշկական այն միջոցների մշակման ժամանակ, որոնք կնպաստեն ախտահարված ֆունկցիաների վերականգնմանը: Հետազոտությունների իրականացումը կապահովեն լաբորատորիայի վեց աշխատակիցները: Կլիրավեն Էլեկտրաֆիզիոլոգիական (ներ և արտաբջջային) գրանցման, նեյրոմոդուլյատիվ և հիստոքիմիական մեթոդներ:

Նախատեսվում է սպեցիֆիկ նեյրոդեգեներատիվ հիվանդությունների մոդելում (Պարկինսոնի և Ալցհայմերի հիվանդություններ), ուղեղի հակացավային կառույցներում, Ալցհայմերի հիվանդության մոդելում Հարջրանցքային գորշ նյութի (Periaqueductal Gray matter), Կապուլյա բծի (Locus coeruleus), Կարի մեծ կորիզի (Nucleus Raphe magnus), Կողմնային թալամուսի, գլխուղեղի առաջնային և երկրորդային Սումատոսենսոր կեղևների (SI և SII), կարճատև և երկարատև հիշողության կառույցների (Հիպոկամպ, Նշած կորիզ, Մեյներսի կորիզ), ինչպես նաև հորմոնալ շեղումով (ադրենալէկտոմիա, օվարիէկտոմիա) սպեցիֆիկ նյարդադեգեներատիվ հիվանդությունների մոդելում ռեցիպրոկ փոխհարաբերությունների մորֆոֆունկցիոնալ հետազոտություն՝ էնդոգեն կենսամոդուլյատորներով ( հիդրոկորտիզոն, սինէստրոլ և այլն), հակաօքսիդանտներով (մելանին), օձի թույնով պրոտեկցիայի պայմաններում: Պետք է ավարտվեն 3 թեկնածուական ատենախոսություններ:

Շաքարախտը սերտորեն կապված է կոգնիտիվ դիսֆունկցիայի՝ դեմենցիայի, ինչպես նաև ուղեղային անոթների վնասման հետ [Seto S, et al, 2015]: Հայտնի է, որ խոլինէստերազայի մակարդակի կարգավորումը բուսական բաղադրիչներով ակտուալ է ոչ միայն հիշողության, այլև վասկուլյար ֆունկցիայի համար [Bhutada P, et al 2011]: Նախատեսվում է էլեկտրաֆիզիոլոգիական և հյուսվածքաբանական եղանակներով ուսումնասիրել հիմնային խոլիներգիկ նեյրոնների և նրանց կեղևային պրոյեկցիաները, ինչպես նաև գլխուղեղի անոթների ֆունկցիոնալ խանգարումները շաքարախտ-միջնորդավորված դեմենցիաների մոդելի և Դիաբեթի բուսահավաքով խոլինէստերազա- ընկճելու միջոցով ֆիտոթերապիայի պայմաններում: Գիտակիրառական նշանակությունը՝ 1) Շաքարախտով հարուցված նյարդադեգեներացիայի խոլիներգիկ մեխանիզմների հիմնավորում, 2) Շաքարախտի ժամանակ Դիաբեթիտով ֆիտոթերապիայի պաշտպանողական ներուժի գնահատում:

Պարկինսոնի հիվանդության արդյունավետ բուժման ռազմավարության որոնումը մնում է արդիական: Գալարմինի նեյրոպրոտեկտիվ ազդեցությունը առնետների գլխուղեղի բջջային կառույցների վրա հայտնաբերելու համար պլանավորվում է Պարկինսոնի հիվանդության

ռոտենտնային մոդելով փորձնական առնետների սև նյութի և դժգույն գնդի նյարդաբջջիջների մորֆոհիստոքիմիական ուսումնասիրություն: Առտիզմը ազդում է ուղեղի շատ կամ բոլոր ֆունկցիոնալ համակարգերի վրա, մինչդեռ ուղեղի զարգացման ժամանակավոր գործընթացը խզվում է ավելի մեծ չափով, քան այս գործընթացի վերջնական արդյունքը: Ի տարբերություն ուղեղի շատ այլ խանգարումների, առտիզմը չունի հստակ միասնական մեխանիզմ ինչպես մոլեկուլային, այնպես էլ բջջային և համակարգային մակարդակներում: Նախատեսված է հետծննդյան զարգացման տարբեր ժամանակահատվածներում առնետների ուղեղի տարբեր բաժինների մորֆոհիստոքիմիական ուսումնասիրություններ կատարել առտիզմի փորձարարական մոդելում, որը առաջացվելու է պրոպիոնական թթվի ենթամաշկային ներարկումներով: Նախատեսվում է առնետների ուղեղի մի քանի բաժինների (պրեֆրոնտալ կեղև, ջրածիու գալար, ուղեղանշիկ, հիպոթալամուս) «հզորության» համեմատական կազմաբանական ուսումնասիրություն՝ օգտագործելով «Քանակական Ֆունկցիոնալ Մորֆոլոգիա» բազմազործոն վերլուծության մեթոդը: Ստացված տվյալները համեմատվելու են նշված բաժիններից արտածված էլեկտրաֆիզիոլոգիական պարամետրերի հետ: Գրանցվելու է մարդու ուղեղի էլեկտրամագնիսական ճառագայթման երևույթը, պարզելու համան գործ նյութի տարածա-ժամանակային ակտիվության որոշ օրինաչափություններ:

Վերաբառադրողական օրգանի հիմնական գործառույթային դերը ապահովվում է և ղեկավարվում է հարթ մկանային հյուսվածքի կծկողականության շնորհիվ: Միևնույն ժամանակ արգանդամկանի մեխանիկական կծկողունակությունը ինչպես և այլ մկանային հյուսվածքներում կապված է բջջային մակարդակում էլեկտրական ակտիվության հետ: Արգանդամկանի պեյսմեկերային ակտիվությունը ներկայացված է պարբերաբար ի հայտ եկող գործողության պոտենցյալների բնկումների ձևով, որոց հերթափոխում են դադարները: Ոչ հղի առնետի արգանդի փողի արգանդամկանի պեյսմեկերային ակտիվությունը ներկայացված է որոշակի, տեղային՝ ձվարանային և արգանդի մարմնին հարակից ցեովիկալ շրջաններում: Ոչ հղի առնետի արգանդի փողի միջին մասի ինքնավար պեյսմեկերային ազդակներ առաջացնելու հարցը առ այսօր վիճելի է մնում: Դաշտանային ցիկլի ժամանակ, արգանդի փողի միջին մասի ակտիվության բնույթի վերաբերյալ հակասական տվյալներ են ստացվել: Այսպես թե այնպես, այդ շրջանում նորմալ պայմաններում, ինքնաբուխ կոորդինացված (համաձայնեցված) ակտիվության բացակայությունը չի բացառում վերջինիս փոխազդեցությունը արգանդի փողի ծայրամասային՝ ութմածին շրջանների հետ: Ընթացիկ տարում աշխատանքները նվիրված են լինելու փողի միջին մասի էլեկտրական ակտիվության բնույթի հետազոտմանը:

2024թ-ին պլանավորվում են գիտափորձեր մարդուց և առնետից անջատված ճարպային հյուսվածքներից ստացված մեզենքիմալ բջիջների անջատման ուղղությամբ: Միաժամանակ բարելավվելու են տարբեր կենդանական օրգանների ապաբջջայնացման և վերաբջջայնացման գործընթացները: Մասնավորապես՝ կհետազոտվեն մաշկի և լյարդի ապաբջջայնացված սքաֆոլդներում իմունախթանիչ մոլեկուլների (ԴՆԹ և α-Գալ ածխաջրի) առկայությունը: Նպատակ ունենալով հայտնաբերել հնարավորինս քիչ իմունոխթանող սքաֆոլդի ստացման տարբերակը՝ սքաֆոլդները կուսումնասիրվեն նաև մեխանիկական հատկությունների բնութագրման ուղղությամբ: Ad-MSC իմունոմոդուլյատոր մեխանիզմների ուսումնասիրությունը մեկ այլ ուղղություն է, որը կշարունակվի իրականացվել Բելատուսի պետական համալսարանի հետ համատեղ: Իրականացված գիտափորձերի արդյունքները կտպագրվեն հայաստանյան և միջազգային պարբերականներում և կներկայացվեն գիտաժողովների շրջանակներում: Ի հավելումն, ուսանողները հնարավորություն կունենան բարելավել իրենց լաբորատոր հմտություններն ու գիտելիքները:

2024թ-ին հոգեֆիզիոլոգիայի բնագավառում կշարունակվի մարդու գլխուղեղի ֆունկցիոնալ վիճակի առանձնահատկությունների համալիր ուսումնասիրությունը պարզ (ՊՏՇՌ) և բարդ տեսաշարողական ռեակցիաների (ԲՏՇՌ-ընտրության ռեակցիա, շարժվող օբյեկտի նկատմամբ ռեակցիա) գրանցման և վերլուծության մեթոդների օգտագործմամբ: Նախատեսվում է հոգեֆիզիոլոգիական բնութագրերի համեմատական հետազոտություն շախմատով կանոնավոր զբաղվող և շախմատային խաղի հմտություններ չունեցող դպրոցական տարիքի երեխաների մոտ: Կիրականացվեն կախվածությունների հոգեֆիզիոլոգիական չափումներն ու ինտերվենցիոն մոտեցումները վիրտուալ իրականության միջավայրում: Կշարունակվեն սպորտսուսնների բնավորության տիպի հոգեֆիզիոլոգիական որոշմանն ուղղված

հետազոտությունները սպորտի յուրահատկությանը ադապտացված ինտեգրալ մոդիֆիկացված համակարգով պոլիգրաֆի կիրառմամբ: Մշակվում է անհատի կրեատիվության և ասերտիվության մակարդակի գնահատման մեթոդական մոտեցումներ: «PSI» ֆիրմայի և ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի հետ համատեղ կշարունակվեն նոր դասի, բարձր զգայունակությամբ օժտված SFCO-տվիչների (բարձրազգայուն մագնիսաչափեր) բժշկա-կենսաբանական հետազոտություններում կիրառման հեռանկարայնությունը: Քանի որ SFCO-մագնիսաչափերի առաջին լաբորատոր օրինակների զգայունակությունը կազմել է 1000pT, ապա 2020-2025թթ ընթացքում նախատեսվում է այդ դասի սենսորների մոդիֆիկացում զգայունակության հետագա բարձրացման նպատակով, այն հասցնելով կենսատիրմոլոգիական դաշտերի համար անհրաժեշտ մինչև 10-100pT ցուցանիշներին:

Նախատեսվում է երիտասարդ գիտաշխատողների վերապատրաստումների շարք արտերկրի խոշոր գիտական կենտրոններում՝ կենսապատկերավորման, կենդանիների հետ աշխատանքի էթիկայի և արյան ածանցյալներից դեղորայքի արտադրության ուղղություններով:

Կազմակերպության  
տնօրեն



(ստորագրություն)

( Նաիրա Այվազյան )  
(անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

( Նաիրա Այվազյան )  
(անուն ազգանուն)



**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ**

«Նյարդային համակարգի ինտեգրատիվ, պլաստիկական հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը» ծրագրի

h/h	Իրականացվելիք միջոցառման			
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	կատարման ժամկետները
1	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (1 փուլ)	Ուսումնասիրել օրգանիզմի շարժողական ֆունկցիոնների կենտրոնական կազմակերպման ինտեգրատիվ ու պլաստիկական մեխանիզմները	Փորձերի կատարում առնետների, մկների, ճագարների և բջջային կուլտուրաների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրաֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական մաթեմատիկական և այլ ընտրանքային մեթոդները:	Հունվար-մարտ 2024թ.
2	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (2 փուլ)	Շարունակել օրգանիզմի վեգետատիվ ֆունկցիոնների կարգավորման կենտրոնական և ծայրամասային մեխանիզմների ուսումնասիրությունը: Մթբես և Վարքագիծ միջազգային գիտաժողովի կազմակերպում:	Փորձերի կատարում առնետների վրա կիրառելով ժամանակակից նուրբ էլեկտրաֆիզիոլոգիական, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Ապրիլ-հունիս 2024թ.
3	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (3 փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ գուգորդված կիրառական բլոկով և ուսումնական ակտիվությամբ (կենսապատկերավորման ամառային միջազգային դպրոց)	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա կիրառելով ժամանակակից կենսապատկերավորման, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Հուլիս-սեպտեմբեր 2024թ.
4	Նյարդային համակարգի հատկությունները և վեգետատիվ ֆունկցիաների կենտրոնական կարգավորման մեխանիզմների ուսումնասիրությունը (4 փուլ)	Հիմնարար հետազոտություններ՝ գուգորդված կիրառական բլոկով: Կենսապատկերավորման միջազգային գիտաժողովի կազմակերպում: Հաշվետվությունների շրջան:	Փորձերի կատարում էքսպերիմենտալ կենդանիների վրա կիրառելով ժամանակակից կենսապատկերավորման, հյուսվածքաքիմիական, կենսաֆիզիկական և այլ մեթոդներ:	Հոկտեմբեր-դեկտեմբեր 2024թ.

Կազմակերպության տնօրեն՝



(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար

(ստորագրություն)

(Նաիրա Այվազյան) (անուն ազգանուն)